Cavouk
Toronto

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ ԵՎ ՖՐԱՆՍԻԱ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Բունիթյանի և Բուենոս Այրեսի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Կենտրոնական Վարչության հրավերին, հովվապետական այցելություն տվեց Հարավային Ամերիկայի հայաշատ գաղթօջախներին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից տանելով Իր հայրապետական օրհնությունը այդ հեռավոր ափերում գտնվող հայ ժողովրդի տարագիր վավակներին:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը և Մայր Աթոռի միաբան Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը՝ որպես գավազանակիր:

Հայոց Հայրապետի սույն ուղևորության ծրագրում նախատեսված էին հովվապետական այցելություններ Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի, ինչպես նաև Ֆրանսիայի հայ եկեղեցական համայնքներին:

ՄԵԿՆՈՒՄ ԷՋՄԻԱԾՆԻՑ

1984 թվականի ապրիլի 25-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 8.30-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առջանորդվում է Միածնաէջ Մայր տաճար:

Քաղցրահնչյուն զողանջում են Մայր տաճարի զանգերը: Ողջ միաբանությունն աղոթում է Նորին Սրբության բարեհաջող և խաղաղ ուղևորության համար: Աղոթում է նաև Վեհափառ Հայրապետը:

Աղոթքից հետո Մայր Աթոռի միաբանների անունից Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ է մաղթում Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը:

Այնուհետև մեքենաների շարասյունը ուղևորվում է դեպի Երևանի «Զվարթնոց» օդանավակայան:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի, ինչպես նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և Մայրավանքի պաշտոնեությունը:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղակալներ՝ Անդրանիկ Հասրաթյանը և Ռաֆիկ Զարգարյանը: